ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

4 սեպտեմբ., թ. 454. Սինոդը Բարձրագոյն հաճութիւն ստանալով, որոշեց. թոյլ տալ Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցու ծխականներին վաճառել եկեղեցապատկան «Արափլու» կոչուած հողերից եղբ. ժամհաւատեանների հաշուով կառուցանելի դպրոցի համար 200 դեսեատին՝ իւրաքանչիւր դեսեատինը հարիւր ռուբլով։

4 սեպտեմբ., թ. 460. Սինոդը՝ ի նկատի ունենալով, որ Վեհափառ Հայրապետը՝ ըստ միջնորդութեան նոյն Սինոդի, բարեհաճել է ներել Վաղարշապատի աղքատ ծխականների ապառիկ հարկերը, որոշեց. համաձայն նորին Սրբութեան բարեհաճութեան չպահանջել Վաղարշապատի աղքատ բնակիչներից նրանց վրայ ապառիկ մնացած հարկերը՝ ընդամենը 1599 ռուբլի 25 կոպ.։

6 սեպտեմբ., թ. 463. Սինոդը Երևանի Հ. կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային տալ կոնսիստորիայի նախկին ծառայող Արսէն Տէր Մարտիրոսեանին տարեկան 60 ռուբլի նպաստ, սկսած այս տարուայ օգոստոսի 1-ից։

9 սեպտեմբերի, թ. 470. Սինոդը՝ Մայր Աթոռի բժիշկ Կ. Տէր Խաչատրեանին, համաձայն նորա խնդրի, ազատ համարելով պաշտօնից, որոշեց. հրաւիրել Մայր Աթոռի բժշկի պաշտօնով բժիշկ Կարապետ Ղափանցեանին տարեկան մի հազար ութ հարիւր ռուբլի ռոճկով և որոշ պարտականութիւններով։

11 սեպտեմբ., թ. 472. Սինոդը՝ Բարձրագոյն թոյլտուութիւն ստանալով, որոշեց. Աստրախանի կոնսիստորիայի միջոցով թոյլ տալ Զերնոմորեան նահանգի Սոչի գիւղի ծխականներին կառուցանել տեղում հայոց եկեղեցի։

11 սեպտեմբերի, թ. 473. Սինոդը՝ Բարձրագոյն թոյլտուութիւն ստանալով, որոշեց. Վրաստանի կոնսիստորիայի միջոցով թոյլ տալ Գանձակի նահանգի Հայ-Կովալեովկա

գիւղի ծխականներին շինել նոյն գիւղում հայոց աղօթատուն։

13 սեպտեմբերի, թ. 484. Սինօդը՝ Վրաստանի Հ. կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Իգդիր գիւղի բնակիչ Գրիգոր Զաքարեանցին, և պատուիրել Վրաստանի թեմի առաջնորդին ձեռնադրել նոյն Զաքարեանին քահանայ Դուշէթի գաւառի Ախալգորի գիւղի համար։

13 սեպտեմբերի, թ. 486. Սինօդը՝ Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Երևանի գաւառի Ներքին-Ղոյլասար գիւղի բնակիչ Արիստակէս Տէր Վարդանեանին, և առաջադրել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քհնյ. նոյն գիւղի վերայ։

13 սեպտեմբերի, թ. 487. Սինօդը՝ Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիոտորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Ղազախի գաւառի Ղոշղոթան գիւղի բնակիչ Նիկողայոս Տէր Յովհաննիսեանին, և պատուիրել Վրաստանի թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քհնյ. նոյն գիւղի վրայ։

13 սեպտեմբերի, թ. 489. Սինօդը՝ Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հայ եկեղեցու ծոցը քըրդուհի Զայնէ Նհոյեանին՝ համաձայն նորա խնդրի, և մկրտել նրան հայ եկեղեցու ծիսով։

18 սեպտեմբերի, թ. 493. Սինօդը՝ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Հին-Խրիմ քաղաքի բնակիչ Պետրոս Թումանեանցին, և առաջադրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ Եւպատորիայի համար։

18 սեպտեմբերի, թ. 497. Սինօդը՝ Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ

նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Բորչալուի գաւառի Այազմա գիւղի բնակիչ Բարդուղիմէոս Զրիգորեանին, և առաջադրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի վերայ։

20 սեպտեմբերի, թ. 497. Սինոդը՝ քննութեան առնելով Տփղիսեցի կարապետ Վարդանեանի կտակի վերաբերեալ գործը և ի նկատի ունենալով, որ Վարդանեանի կտակած 20,000 ռուբլի գումարի տոկոսներով ըստ կտակակատարի ցանկութեան պէտք է օգտուի Ճաճկատանի ս. Կարապետ վանքը, որոշեց. ըստ բարեհաճութեան Վեհափառ Հայրապետի ուղարկել կտակած գումարը Կ. Պոլսի պատրիարքին՝ վարուելու ըստ կտակի տրամադրութեան։

23 սեպտեմբերի, թ. 508. Սինոդը՝ ստանալով Դանձակում բնակուող երդուեալ հաւատարմատար պ. Նիկողայոս Բաբաքևխեանի համաձայնութիւնը, որոշեց. վարձել երդ. հաւատ. պ. Ն. Բաբաքևխեանին փաստաբան Ղարաբաղի թեմի և թեմում գտնուող վանքերի կալուածական գործերը դատաստանական ու վարչական բոլոր հիմնարկութիւններում պաշտպանելու և վարելու համար՝ տարեկան 1200 ռուբլի վարձով։

23 սեպտեմբերի, թ. 509. Սինոդը՝ քննութեան առնելով Ժամհարեան եղբ. դրամական նուէրի վերաբերեալ գործը, որոշեց. Ժամհարեան եղբայրների հանգուցեալ Մկրտիչ Ս. Կաթուղիկոսին ուղարկած գումարից Սինոդիս հասած մօտաւորապէս 10,000 ռուբլի գումարի տոկոսներով Մ. Աթոռի ձեմարանում պահել սաներ կտակարարների անունով։

25 սեպտեմբերի, թ. 512. Սինոդը՝ Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Նորբայազէտի գաւառի Ներքին-Աղիեաման գիւղի բնակիչ Անանիա Օահակեան Ղալաչեանին, և պատուիրել Երևանի փոխթեմակալին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վերայ։

25 սեպտեմբերի, թ. 513. Սինոդը՝ ի նկատի ունենալով, որ Կովկասի հայաբնակ գիւղերից մի քանիսի պաշտօնական անուններըը տարբերւում են ժողովրդի գործածած հայերէն անուններից, և այդ հանգամանքը թիւրիմացութեան առիթ է տալիս կոնսիստորիաներին չափաբերական մատեաններից որոշ տեղեկութիւններ տալու ժամանակ, իսկ յատկապէս զինուորագրութեան մասին տուած տեղեկութիւնները երբեմն լինում են անստոյգ, որոշեց. պատուիրել բոլոր կոնսիստորիաներին ուղարկել Սինոդին իրենց թեմում գտնուող բոլոր հայաբնակ գիւղերի թէ պաշտօնական և թէ տեղական անունների ցուցակները:

26 սեպտեմբերի, թ. 518. Սինոդը՝ քննութեան առնելով Սաչի քաղաքի ծխատէր Խորէն քհնյ. Ադիլեանի մեղադրական գործը, որոշեց. ի նկատի ունենալով, որ Խորէն քհնյ. Ադիլեանը վարում է հոգևորականին անվայել կեանք և գործել է մի շարք յանցանքներ, որոնք մոլութեան բնաւորութիւն են կրում, Աստրախանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, կարգալոյծ անել նրան և ընդմիշտ զրկել հոգևոր կոչումից:

30 սեպտեմբերի, թ. 525. Սինոդը՝ Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Ախալցխայի գաւառի Տամալա գիւղի բնակիչ Յակոբ Տէր Յակոբեանին, և պատուիրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վրայ, ստանալով նրանից ստորագրութիւն ցմահ նոյն գիւղում քահանայագործելու պարտաւորութեամբ:

30 սեպտեմբերի, թ. 526. Սինոդը՝ ի նկատի ունենալով, որ Սինոդի անդամ Տ. Յուսիկ վարդապետը Մոսկուայի Լազարեան ճեմարանում կրօնուսոյց կարգուելու պատճառով Բարձրագոյն հրամանով արձակուում է իւր պաշտօնից, որոշեց. ազատ համարել Տ. Յուսիկ վարդապետին Սինոդի անդամի պաշտօնից և պատուիրել Մ. Աթոռի գանձապահին կարճել նրա ռոճիկը և սննդագրամը այս տարուայ հոկտեմբերի 1-ից:

30 սեպտեմբերի, թ. 527. Սինոդը՝ Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թույլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Տփխիս քաղաքի բնակիչ Յովհաննէս Գրիգորեանցին, և պատուիրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ Տփխիսի գաւառի Կոդա գիւղի վրայ, ստանալով նրանից ստորագրութիւն ցմահ նոյն գիւղում քահանայագործելու պարտաւորութեամբ։

4 հոկտեմբերի, թ. 529. Սինոդը՝ համաձայն Ախալքալակի գաւառի Մեծ-Խենչալի գիւղի ծխականների միջնորդութեան, որոշեց. թույլ տալ նոյն ծխականներին նորոգել գիւղի եկեղեցին, ծախսելով եկեղեցապատկան գումարներից 1000 ռուբլի ըստ ներկայացրած նախահաշուի։

4 հոկտեմբերի, թ. 530. Սինոդը՝ Շամախու կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թույլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Գեօքչայի գաւառի Փէշխուրդ գիւղի բնակիչ Վրթանէս Դանիէլեանին, և պատուիրել Շամախու թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ նոյն գաւառի Փաթաքլու գիւղի համար, ստանալով նրանից ստորագրութիւն ցմահ նոյն գիւղում քահանայագործելու պարտաւորութեամբ։

4 հոկտեմբ., թ. 531. Սինոդը՝ Շամախու կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թույլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Շամախու գաւառի Մէյսարի գիւղի բնակիչ Գաբրիէլ Գասպարեանին, և պատուիրել Շամախու թեմի առաջնորդին ձեռնադրել յիշեալ Գասպարեանին քահանայ Մէյսարի գիւղի համար, ցմահ նոյն գիւղում քահանայագործելու պարտաւորութեամբ ստորագրութիւն առնելով նրանից։

4 հոկտեմբերի, թ. 532. Սինոդը՝ Շամախու կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թույլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Գեօքչայի գաւառի Ռուշանաշէն գիւղի բնակիչ Սաղաթէլ Թաբրիզեանցին, և պատուիրել թեմի առաջնորդին ձեռնադրել

նրան քահանայ նոյն Ռուշանաշէն գիւղի համար և ստանալ նրանից ստորագրութիւն ցմահ նոյն գիւղում քահանայագործելու պարտաւորութեամբ։

4 հոկտեմբերի, թ. 533. Մինօդը՝ Բեսարաբիայի և Նոր-Նախիջևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հայ եկեղեցու ծոցը Սևաստոպոլում բնակւող մահմեդական Բայմաբէթ Հաջի Մամբէթ օղլուն։

4 հոկտեմբերի, թ. 534. Մինօդը՝ Շամախու կոնսիստորիայի միջնորդութեան և Վեհափառ Հայրապետի պատուէրի համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային, հոգևոր կոչման մէջ ընդունել Գեօքչայի գաւառի Քաւանդի գիւղի բնակիչ Երեմիա Գասպարեանին, և պատուիրել թեմի առաջնորդին, որպէսզի ձեռնադրել նրան քհնյ. Քաւանդի գիւղի համար, բաւականանալով ընծայացուի՝ Դաղեանի երկդասեան դպրոցից ստացած վկայականով, ի նկատի ունենալով, որ թեմում եկեղեցական-ծխական երկդասեան լրիւ դպրոց չկայ։

7 հոկտեմբերի, թ. 542. Մինօդը՝ համաձայն Վեհափառ Հայրապետի պատուէրի, որոշեց. տալ Մայր Աթոռի գանձարանից Համազգային Մեծ Յոբելեանի տնտեսական յանձնաժողովի նախագահ Տ. Մուշէ վարդապետին երեք հազար ռուբլի յոբելենական հանդէսների համար կարևոր պատրաստութիւններ տեսնելու և հիւրերի պէտքերը հոգալու համար։

9 հոկտեմբ., թ. 543. Մինօդը՝ համաձայն Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստոցիային հոգևոր կոչման մէջ ընդունել Գորու գաւառի Կաւթիսխևցի գիւղի բնակիչ Կարապետ Մանուկեանին, և պատուիրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ նոյն գաւառի Ուփլեսցիխէ գիւղի համար։

11 հոկտեմբերի, թ. 547. Մինօդը՝ Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ

Կարսի վիճակի Արազին գիւղի ծխականներին վերանորոգել իրենց եկեղեցու տանիքը՝ ծախսելով 350 ռուբլի:

11 հոկտեմբ., թ. 548. Սինոդը՝ Երեւանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. ընդունել Հայ եկեղեցու ծոցը Վերին-Շենգաւիթ գիւղում բնակւող քրդուհի Թէլլի ղզուն, և առաջադրել նոյն կոնսիստորիային տնօրինել մկրտել յիշեալ քրդուհուն:

11 հոկտեմբ., թ. 549. Սինոդը՝ լսելով Մ. Աթոռի վանական կառավարութեան այս տարուայ յունիսի 25-ի, № 41, յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ վանակ. կառավարութեան վաճառել 70 ռուբ. հանգուցեալ Թագուհի Սաֆարեանի Մ. Աթոռին նուիրած տնակը, և այդ գումարը պահել անձեռնմխելի ի յիշատակ նուիրատուի, գործադրելով միայն տոկոսները:

11 հոկտեմբերի, թ. 552. Սինոդը՝ Երեւանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգեւոր կոչման մէջ ընդունել Հին-Նախիջեւանի գաւառի Առինջ գիւղի բնակիչ Տիգրան Տէր Յովհաննիսեանին, և առաջադրել Երեւանի փոխ-թեմակալին ձեռնադրել նրան Առինջ գիւղի համար քահանայ, ստանալով նրանից ստորագրութիւն ցմահ նոյն գիւղում քահանայագործելու մասին:

11 հոկտեմբ., թ. 553 Սինոդը՝ ստանալով ռուսահայ կոնսիստորիաներից իւրաքանչիւր թեմի եկեղեցիների և սոցա կից հիմնարկութիւնների օգտին, 1912 թ. ընթացքում եղած նուիրատուութիւնների տեղեկագրերը, որոշեց. ուղարկել այդ տեղեկագրերը Հոգեւոր Գործոց Դեպարտամենտին, համաձայն սորա 1912 թ. ապրիլի 14-ի, № 3703 գրութեան, որով առաջարկւում է ամեն տարի ուղարկել ընդհանուր տեղեկագիր հայ եկեղեցիների օգտին եղած նուիրատուութիւնների մասին:

18 հոկտեմբերի, թ. 554. Սինոդը՝ Ատրպատականի թեմի առաջնորդի միջնորդութեան և Վեհափառ Հայրա-

պետի պատուէրի համաձայն, որոշեց. Խորէն վարդապետ Լազարեանին կարգել Ուրմիոյ փոխանորդ, տալով նրան հոկտեմբեր ամսուայ ռոճիկն ու ննդադրամը և 40 ռուբլի ճանապարհածախս։

18 հոկտեմբ., թ. 555. Սինոդը՝ համաձայն Վեհափառ Հայրապետի պատուէրի, քննութեան առնելով Թիֆլիզի թեմի ուխտատեղիների արդիւնքը թեմական տեսչին յատուկացնելու խնդիրը, որոշեց. յայտնել նորին Վեհափառութեան, որ Սինոդի կարծիքով Թիֆլիզի թեմի ուխտատեղիների արդիւնքը պէտք է թողնել թեմի առաջնորդի տրամադրութեան տակ՝ թեմական տեսչին յատկացնելու համար, բացի Թելէթ և Բոլնիս ուխտատեղիներից, որոնց արդիւնքը ուղարկուում է Սինոդ՝ համաձայն 1911 թ. մարտի 9-ի օրագրի։

18 հոկտեմբերի, թ. 556. Սինոդը՝ համաձայն Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Նոր-Բայազէտի գաւառի Դշլաղ գիւղի բնակիչ Վասակ Տէր Մկրտչեանին, և առաջադրել Երևանի փոխ-թեմականին ձեռնադրել նրան քահանայ Աղէքսանդրապոլի գաւառի Սարմուսախլի գիւղի համար, ստանալով նրանից ստորագրութիւն նոյն գիւղում ցմահ քահանայագործելու պարտաւորութեամբ։

23 հոկտեմբերի, թ. 562. Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթողիկոսի այս տարուայ հոկտեմբերի 17-ի, № 1591, կոնդակը, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան արձակած համարել Մատթէոս եպիսկոպոսին, ըստ իւր խնդրանաց, Մ. Սթոռի տպարանի վարչութեան նախագահի պաշտօնից և կարգել նոյն պաշտօնում Մուշէ վարդապետին։

23 հոկտեմբ., թ. 563. Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթողիկոսի հոկտեմբերի 17-ի, № 1590 կոնդակը, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան, արձակած համարել Մուշէ վարդապետին, ըստ իւր խնդրանաց, Մայր

Աթոռի վանական կառավարութեան նախագահի պաշտօնից և կարգել նոյն պաշտօնում Եփրեմ եպիսկոպոսին։

25 հոկտեմբ., թ. 572. Սինոդը՝ Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Ներսիսեան դպրանոցի ընթացաւարտ Գրիգոր Շահբուդաղեանին, և առաջադրել փոխ-թեմականին ձեռնադրել նրան քահանայ Երևանի Ս. Կաթուղիկէ եկեղեցու ծխականների վրայ։

25 հոկտեմբ., թ. 573. Սինոդը՝ համաձայն Ատրպատականի թեմի առաջնորդի միջնորդութեան, որոշեց. տալ նոյն առաջնորդին Ս. Աթոռի գանձարանից և 350 ռուբլի իբրև նպաստ Պարսկաստանի Օէյդավար գիւղի դպրոցին։

25 հոկտեմբ., թ. 574. Սինոդը՝ լսելով Ղարաբաղի կոնսիստորիայի անցած տարուայ դեկտեմ. 19-ի, № 3806, յայտարարութիւնը, որով զեկուցանում է, թէ ճալէթի վանքի 4 կտոր վիճելի հողերն արդէն ճանաչուած են նոյն վանքի սեփականութիւն, որոշեց. պատուիրել Ղարաբաղի կոնսիստորիային փաստաբանի միջոցով դատ բանալ՝ պահանջելու պետական գանձարանից յիշեալ հողամասերի 14 տարուայ եկամտի $^1/_3$ մասը։

25 հոկտեմբ., թ. 576. Սինոդը՝ զննութեան առնելով Ղարաբաղի կոնսիստորիայի 1912 թ. դրամական մատեանները և ծախքի փաստաթղթերը, որոշեց. ընդունել նոյն կոնսիստորիայի 1912 թ. ելևմտից հաշիւները, պատուիրել, որ թեմական տեսչին աւելորդաբար տրուած 600 ռուբլին լրացուի այն աղբիւրներից, որոնցից ենթադրւում է հոգալ նորա ռոճիկը, և վերջին անգամ զգուշացնել կոնսիստորիային, որ նախահաշուից դուրս արած ծախքը կը պահանջուի կոնսիստորիայի կազմից։

25 հոկտեմբ., թ. 579. Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթողիկոսի այս տարուայ հոկտեմբ. 25-ի, № 1640 կոնդակը, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան,

ճանաչել Գէորգ վարդապետ Զէորեքչեանին Նոր-Նախիջևանի փոխանորդ, և առաջարկել Բեսսարաբիայի կոնսիստորիային տալ նրան փոխանորդական ռոճիկ։

28 հոկտեմբ., թ. 580. Մինօդը՝ Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Էջմիածնի գաւ. Ղարղավանք գիւղի բնակիչ Համբարձում Տէր Գրիգորեանին, և պատուիրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ նոյն Ղարղավանք գիւղի համար։

28 հոկտեմբ., թ. 581. Մինօդը՝ լսելով Կովկասի Տ. Փոխարքայի այս տարուայ հոկտեմբերի 17-ի, № 26603 գրութիւնը՝ Բագուի գաւառի Սաբունչի գիւղում հայոց եկեղեցի շինելու համար Բարձրագոյն թոյլտուութիւն ստացուելու մասին, որոշեց. թոյլ տալ Շամախու կոնսիստորիային ձեռնարկել Սաբունչի գիւղի եկեղեցու շինութեանը՝ ներկայացրած նախահաշուի և յատակագծի համեմատ։

30 հոկտեմբ., թ. 586. Մինօդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի հոկտեմբերի 22-ի, № 1625 կոնդակը, որոշեց. վաւերացնել Մատթէոս եպիսկոպոսի ներկայացրած վկայականը, որով յայտնում է, թէ Մ. Աթոռի միաբան Կարապետ սարկաւագին ձեռնադրել է կուսակրօն քահանայ և աբեղայ՝ անուանելով նրան Թադէոս, և, համարելով Թադէոս աբեղային Մ. Աթոռի միաբան, պատուիրել Մայր Աթոռի գանձապահին տալ նրան ռոճիկ և սննդադրամ սահմանուած չափով։